Բովանդակություն

1. Ներածություն - - -

Ներածություն

Հայաստանի Հանրապետությունում աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է ՀՀ պետական չափորոշչում՝ որպես կրթության բովանդակային բաղադրիչ: Ուսումնական յուրաքանչյուր առարկա պահանջում է սովորողների պատրաստվածությանը ներկայացվող գիտելիքային պահանջների մեջ առանձին կետով, նշում է նաև արժեքները և դրանց ձևավորումը, որը կսովորեն դպրոցում:

Մանկավարժական գիտության մեջ <<արժեհամակարգ>> հասկացությունն ըմբռնվում է լայն շառավիղով: Ավելի քան ընդունվում է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, իմացական, էթնիկական և մշակութային արժեքների համախումբ է , որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար:

Անցյալի փորձը կուտակված է արժեհամակարգի մեջ, որի յուրացումը ձևավորում է աշակերտի մեջ նախ և առաջ հայրենասիրություն,իր ժողովրդի պատմության, նրանց ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների, սեփական կրոնը և գիրը արժանապատիվ պահելու զգացում:Աշակերտների մոտ համազմուքների և կարողությունների է վերածվում ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները:

Դաստիարակության գործընթացն աճող սերնդի հանար ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցությամբ՝ ազգային, ժողովրդագրական, ընտանեկան, կրթական, մշակութային, հասարակական, սոցիալական և այլն: Չանտեսելով համամարդկային արժեքները՝ մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակացության ձևավորումը սեփական ժողովրդի մշակույթի և պատմության հենքի վրա:

Մեծագույն և նվիրական արժեքը՝ հայրենասիրությունը, կարելի է դնել արժեքների բուրգի գագաթին,որը լավագույն կերպով մատուցվում է գրականության դասընթաց-

ների ժամանակ: Ուսուցիչներից յուրաքանչյուրն ունի որոշակի առանձնացված ստեղծագործություն կամ հեղինակ, որը նրան ամենամատչելի ձևով օգնում է իր մանկավարժական խնդիրները լուծելու, բարձրագույն արժեքը՝ հայրենասիրությունը, իր սաների հոգում սերմանելու համար:

Արժեքային համակարգ

Արժեքը, աշխարհի յուրահատուկ ընկալումն է, որը ձևավորվում է ոչ միայն ձեռք բերած գիտելիքների և ինֆորմացիայի, այլև սեփական կենսափորձի հիման վրա:

Մարդու արժեհամակարգի հետ խիստ կապված է մշակույթը: Արժեքը, դա մարդու համար իրի, առարկայի կամ երևույթի դրական նշանակությունն է: Մարդու վերաբեր-

մունքն արտահայտող ցուցանիշ է արժեքը, որի կարևորագույն մասն են կազմում հավատն ու սերը:

Հավատը հույս է ծնում մարդու մեջ և նրան մղում է ապրելու, արարելու և ստեղծելու: Հավատը կողմնորոշիչ է դառնում մարդու գործունեության և կյանքի համար: Մարդիկ ապրում են՝ հավատում են, իսկ երբ կա հավատ, ուրեմն ապրում են:

Սերը ձգտում է մյուսների հետ միավորվելու, որի մեջ են միավորվում մարդու արժեքային պատկերացումները:

Սերն անահատական, ընտրողական զգացում է, որը կարող է դրսևորվել խորը և կայուն ապրումներով:

Ըստ Հեգելի՝ սիրո ճշմարիտ էությունն այն է, որ հրաժարվես ինքդ քեզ գիտակցելուց, մոռանաս քեզ ուրիշի « Ես»-ի մեջ և այնուամենայնիվ, այդ կորսվածության և մո-

ռացվածության մեջ առաջին անգամ գտնես և տիրապետես քեզ:

Սերն, ըստ Հեգելի, ապրում է, չի հենվում դատողությունների ու խորհրդածություն-

ների վրա, այլ բխում է զգացմունքից:Այն խիստ անհատական և անկրկնելի ապրում է:

-3-

Յուրաքանչյուր ոք սիրում է յուրովի: Սիրո մեջ մարդն իր նկատմամբ դառնում է ավելի պահանջկոտ և ձգտում է ինքնակատարելագործման: Այդ պատճառով էլ սերը մշակութային և գեղեցիկ երևույթ է:

Բարու և գեղեցիկի հետ կապվելի արժեք է համարվում նաև ճշմարտությունը:

Հաճախ կյանքում ճշմարտությունը զոհաբերվում է արժեքներին: Արիստոտելը, եթե առաջնորդվում էր «Թեև Պլատոնը բարեկամս է, բայց ճշմարտությունը թանկ է» սկզբունքով, ապա մարդկանցից շատերն առաջնորդվում են «թեև ճշմարտությունը թանկ է, բայց Պլատոնը բարեկամս է» սկզբունքով:

Արժեհամակարգի ստեղծումը պետք է դառնա կրթության հենքը և գլխավոր ի-մաստը: Դպրոցում պետք է ստեղծվի մի օրինակելի տարածք, որտեղ հաստատուն են էթիկական նորմերը, ուր աշակերտները սովորում են դրանց համապատասխա-նել:

Մ. Վեբերը արժեքը մեկնաբանում է որպես այս կամ այն պատմական ժամանակա-շրջանի դիրքորոշում, որպես դարաշրջանին հատուկ հետաքրքրասիրության ուղղու-թյուն:

Դպրոցն է ձևավորում սերունդների արժեհամակարգը: Ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարո-յական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է:

Ժամանակակից դպրոցի խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, ո-

րոնք ժառանգել ենք մեր նախնիներից, և որը մեր անխառն ինքնությունն է համաշ-

խարհային մշակույթի բազմազանության և բազմերանգության մեջ: Դպրոցում կրթու-

թյան և դաստիարակության գործընթացի ճիշտ կազմակերպման համար կարևոր են

բարձրարժեք ստեղծագործությունների ուսումնասիրումն ու ուսուցումը՝ ի դեմս

պատմավեպերի:

Պատմավեպերում արտահայտված եմ մեր ժողովրդի հոգեկերտվածքը, աշխարհի-

ընկալումը, մարդասիրական և հայրենասիրական գաղափարներն ու գալիքի երա-

զանքները: Այստեղ է, որ ամենավառ ձևով արտացոլված է մեր ազգի ազգային հա-

վաքական բնույթը, անդրդվելի կամքը, ներքին զորությունն ու հնարավորությունն-

ը, վերածնվելու, ապրելու և հարատևելու ունակությունը, ազգերի պատմության մեջ

իր արժանի տեղն ունենալու ձգտումը: Սա է ամենակարևորը, որ պետք է ավանդել

նոր սերունդներին: Այն գիտակցության նա պետք է հասնի, որ հասարակական կյան-

քի առաջընթացը պայմանավորված է համախմբվածությամբ, գիտելիքների բարձր

մակարդակով ու մշակութային արժեքների ոչ միայն ստեղծմամբ, այլ նաև պահպան-

մամբ: Պետք է դաստիարակել սերունդ, որը կկարողանա շարունակել ազգային լա-

վագույն ավանդույթները, մարդկությանն ու աշխարհին ցույց տալ իր մշակութային

հարստությունն ու բարոյական արժեքները:

Փորձենք հասկանալ, թե ինչպես է ձևավորվում արժեքային համահարգը պատ-

մավեպերը ուսումնասիրելիս: Պատմավեպերը դաստիարակչական վիթխարի ներուժ

ունեն: Այն ուսումնասիրելիս աշակերտի մոտ ձևավորվում է բարոյականի և ազնիվի

գիտակցումը:

Անձի արժեքային համակարգի ձևավորման և զարգացման դերը Դերենիկ Դեմիրճյանի <<Վարդանանք>> վեպում

Դերենիկ Դեմիրճյանի <<Վարդանանք>> պատմավեպով հասկանանք, թե պատ-

մավեպը ինչ արժեքներ կարող է ձևավորել ժամանակակից սերնդի մեջ:

Վեպը Դեմիրճյանը գրեց պատերազմի ժամանակ՝ 1943 թվականին, վեց ամսվա

ընթացքում:Պատերազմը միայն առիթ էր, որ պոռթկար տասնամյակների ընթացքում

կուտակված խոհերը, զգացմունքներն ու մտքերը: Պատերազմի ժամանակ ստեղծ-

ված գիրքը ոգեշնչման և հող հայրենին պահպանելու լավագույն տարբերակ էր:

Վեպը անձի մեջ ձևավորում է հայրենասիրություն, հավատ, իր ունեցածը պահ-

պանելու արժեքներ, ինչու չէ, նաև հակակրանք և բացասական վերաբերմունք է ձե-

վավորում դավաճանների, ազգուրացների և կրոնոփոխ եղողների նկատմամբ: Այս

պատմավեպում կարևոր է նաև ժողովրի դերի ըմբռնման հարցը: Ի տարբերություն

Ռաֆֆու <<Սամվելի>> և Մուրացանի <<Գևորգ Մարզպետունու>>, այստեղ՝ <<Վար-

դանանքում>>, կարևոր տեղ է զբաղեցնում ժողովուրդը: Վեպում ժողովրդին մեծ

տեղ հատկացնելը սովորեցնում էր, որ պատմությունը կերտում են ժողովուրդները:

Դեմիրճյանը համոզված էր, որ Վարդանանք մղել են հայրենական պատերազմ, այ-

սինքն այնպիսին, երբ կանոնավոր զորքից բացի կռվում էր հաև աշխարհազորը, ժողովուրդը, կամավորները: Ահա արժեքային համակարգի մի օրինակ, որը օգտագործում է հայ ժողովուրդը և պատերազմի ժամանակ, մի բռունցք դարձած, համախմբվում է և պայքարում թշնամու դեմ:

Վեպի թեման ազգային-ազատագրական պայքարն է, ոքին ու բովանդակությունը՝ հայրենիքի ազագրման գաղափարը: Շլացուցիչ վարպետությամբ է Դեմիրճյանը պատկերել հինգերորդ դարի տագնապալի ու օրհասական վիճակը, հայոց աշխարհի ընդվզումը, պատմական պահի լրջությունը և ժողովրդի հերոսական ոգին: Խոսելով վեպի առաջին հատորի մասին Իսահակյանը գրում էր. <<Վեպը վառվում է ռազմական կրակով, յուրաքանչյուր էջից, կարծես, վրնջում են նժույգները, կորովի երիտասարդները պատրաստ են կռվելու և զոհվելու հայրենիքի համար>>: Վեպի այս հատկանիշը համահունչ էր պատերազմական օրերի ոգուն:

Պատմավեպերի ուսուցման ընթացքում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային ընդհանուր զարգացման խնդիրներ: <<Վարդանանք>> վեպը ամբողջությամբ հագեցած է հայրենասիրությամբ և դավաճանների

հանդեպ բացասական վերաբերմունքով: Վարդանանք վեպի ուժերն են, որ վճռակա-

նորեն կանգնած են երկրի պաշտպանության դիրքերում: Հայրենասիրություն ձևավորելու լավագույն օրինակներն են: Դա նախ և առաջ Վարդան Մամիկոնյանն է, նրա ընտանիք՝ մայրը՝ Մեծ Տիկինը,կինը՝Մամիկոնեից տիկինը, որդին՝Զոհրակը,դուստը՝ Շուշանիկը, եղբայրը՝ Համազասպը, ապա Դավիթ սեպուհը, Արտակ Մոկացը, Ատոմ Գնունին, Ներշապուհ Արծրունին, Սրվանձտյան Գարեգինը, Գեդեոնը, Աստղիկը Ղևոնդ երեցը և ողջ հայոց աշխարհը:

Շինականի հայրենիքը հողն է, և նա վեր է կացել պարսիկի դեմ այդ հողի համար,

նա հավատում է հողի զորությանն ու հավերժությանը և համոզված է, որ թշնամիները

կգան ու կգնան, հողն ու աշխարհը կմնան: Այդ գիտակցությամբ են կռվում վեպի շի-

նական հերոսները՝ Առաքելը, Սահակը, Խանդութը, և ուրիշներ:

Վեպում Վարդանանք միակերպ զանգված չեն, այլ նույն գաղափարի շուրջ համա-

խմբված անհատականություններ: Աշակերտների մոտ իրենց հայրենասիրությամբ և

անձնվիրությամբ արժեքային համակարգ կարող են ձևավորել Ատոմ Գնունին, Ար-

տակ Մոկացը և այլոք:

Ատոմ Գնունին հմուտ ու քաջ զորական է՝ ամբողջովին նվիրված հայրենիքի

պաշտպանության գործին: Նա այնքան լավ է տիրապետում ռազմական արվեստին,

որ Ավարայրի ճակատամարտի ժամանակ Վարդանը նրան է ավանդում իր գործի

շարունակության պատիվը: Ատոմն օժտված է իր դասին վայել հպարտությամբ ու

արժանապատվությամբ և չի հանդուրժում ռամիկի ըմբոստությունը:

Արտակ Մոկացը հակված է փիլիսոփայելու, նա խորհում է հայի ոգու, նրա արվես-

տի ու փիլիսոփայության մասին: Նա ժողովրդի իմաստասիրական ոգու կրողն է, որ

սուրը ձեռքին կռվում է ոգու պահպանման համար:

Վեպում կանայք ունեն կարևոր և արժեհամակարգ ստեղծող դեր: Նրանք վեպում

մեծ թիվ են կազմում և համալրում են հայրենասերների բանակը: Նրանք կռվում են

ազատության համար՝ մոռացած կանացի տկարությունը:

Այս ամենի հայրենասիրական մղումներին ընթացք տվողն ու նրանց առաջնորդո-

ղը, Վարդան Մամիկենյանն է, ով քաջության, հզորության և անպարտության մարմ-

նացում է: Վարդանը ապրում է երկրի հոգսերով՝ մոռացած իր անձը: Նա սիրում ու

գնահատում է իր զինվորներին և որքան խիստ է որպես զինվոր, նույնքան ջերմ է

նրանց նկատմամբ՝ իբրև մարդ:

Բոլոր ժամանակներում հայ զինվորը կռվի պետք է գնա՝ Վարդան Մամիկոնյանին իր աչքի առջև ունենալով, և նրա խոսքերը ականջներում և արիության ու քաջության մեջ վախկոտություն չխառնի:

<<Վարդանանք>> վեպը աշակերտի հոգում վառում է հայրենասիրության կրակը՝ վեպի հայրենասեր հերոսների, նրանց գործողությունների, անձնազոհության և հայրենասիրության բացահայտումներով: Հայրենասիրությունն այն մեծագույն արժեքն է, որ հարգանք ու պատկառանք է հարուցում, նույնիսկ, երբ դրսևորվում է հակառակորդի կամ թշնամու մոտ:

Վեպը աշակերտներին բացի հայրենասիրությունից, նաև սովորեցնում է պահել և պահպանել սեփական գիրը, կրոնը և մշակույթը: Չէ որ Ավարայրի ճակատամարտը բացի հայրենիքից նաև գրի, կրոնի և մշակույթի, հայի ինքնության պահպանման ճակատամարտ էր: Թև հայերը կռվում կորցրին իրենց առաջնորդին և նահանջեցին, բայց կարողացան պահել ու պահպանել քրիստոնեությունը և Աստծո զորությամբ տրված գրերը: Աշակերտները պատք է գնահատեն այդ արժեքները և այդ արժեքների կրողն ու պահապանը դառնան:

Անձի արժեքային համակարգի ձևավորման և զարգացման

դերը Ռաֆֆու <<Սամվել>> վեպում

Արժեհամակարգ կարելի է ձևավորել նաև Ռաֆֆու պատմավեպերով,մանավանդ, որ Ռաֆֆին էլ գրել է. <<Պատմանկան վեպը,մի ժողովրդի պատմական կյանքի նկարագիրն է: Նա պատկերացնում է յուր մեջ, թե որպես ապրել և որպես գործել է մի ժողովուրդ,պատկերացնում է նրա բարքը,վարքը,սովորությունները,պատկերացնում է նրա մտավոր և բարոյական հատկությունները…>>:

Ռաֆֆու կարծիքով պատմությունը կրկնվում է և պատմական անցյալի ու ժամանակակից դեպքերի միջև կա մի զարմանալի նմանություն: Հետևաբար պատմությունը ոչ միայն անցյալի հայելին է, այլև ներկայի խորհրդատուն: <<Պատմությունը մի վարդապետարան է, - ասում է Ռաֆֆին, - մի դասարան է, որի մեջ ապագա սերունդը կրթվում է, զգուշանալով իր նախահարց սխալներից և հետևելով նրանց լավ գործերի օրինակին>>: Բազմաթիվ արժեքներ կարելի է վերցնել Ռաֆֆու <<Սամվել>> վեպից:

Վեպի հիմքը ազգապահպանության գաղափարն է, որը եղել է չորրորդ դարում, տասնիններորդ դարում և այսօր էլ կրկնվում է:Գալիք սերունդը պետք է վեպից վերցնի ամենաազնիվը,վեհը և վսեմը: Իր համար դարձնի ուղղենիշ և ընդանա ճշտի և վսեմի ճանապարհով: Մերժի ստախոսներին, խաբեբաներին և հայրենիքի դավաճաններին: Կարողանա հայրենիքը պաշտպանել զենքով և գիտությամբ: Այսօր ևս պըտըտվում է պատմության անիվը և հայ ազգը նորից պատերազմների թատերաբեմում է և գերտերությունների ձեռքին խաղալիք է: Աշակերտը պատմավեպերից

պետք է սովորի հայրենասիրություն, հավատարմություն, արիություն և քաջություն,

պահպանի իր հավատը, մշակույթը, սովորույթները և ավանդությունները, չէ որ

<<Ամեն մի նոր մոռացված հինն է>>:

Պատմավեպի միջոցով աշակերտը կճանաչի իր ազգի բարեկամներին, նրան օր-

հասական պահերին ժամանակին ձեռք մեկնողներին և բարեկամի դիմակի տակ

թաքնված թշնամուն, ով, միշտ ձևանալով բարեկամ, խլում է հայից իր հողը և նվի-

րում թշնամուն՝ ինչ-որ բանի դիմաց՝ ունենալով իր անձնական շահը:

Վեպում նկարագրվում են չորրորդ դարի իրադարձությունները: Վեպի <<Մեկը-

արևմուտքում, մյուսը-արևելքում>> վերնագրով հատվածում Ռաֆֆին շեշտը դնում է

հայոց պատմության մի ցավալի իրողության վրա: Դա նրա կախվածությունն է արևել-

քի և արևմուտքի միջև: Եվ այս բաժանումը երկու մասի, դարձավ նրա պատմության

գլխավոր չարիքը: Արշակ Երկրորդ թագավորը փորձեց նոր ուղղություն տալ հայոց

պատմությանը, թոթափել երկիրը պարսկական ու բյուզանդական բաժանումից և

ստեղծել ուժեղ, իրնքնուրույն, անկախ պետություն: Սակայն նախարարների կենտ-

րոնախույզ դավադրությունը ձախողում է նրա ծրագրերը:

Պատմությունը կրկնվելու հատկություն ունի: Այսօր Հայաստանը ունի Արշակ Երկ-

րորդի երազած անկախությունը,որը հայ ժողովուրդը ձեռք է բերել բազմաթիվ մաքա-

ռումներց հետո, բայց այսօր հայրենիքը կանգնած է ընտրության առջ և կարող է մի

չմտածված քայլի պատճառով կորցնել իր անկախությունը, զրկվել բազմաթիվ տա-

րածքներից, որը մեզ է ժառանգվել հայորդիների թափած արյան շնորհիվ: Աշակերտ-

ները պետք է հասկանան, որ կյանքում ամենաբարձր արժեքը հայրենիքն է:

Վեպի հիմնական գաղափարներից են հայրենասիրությունը և ազատագրական

պայքարը: Հայրենասիրության լավագույն օրինակներ են նաև կանայք, ովքեր օրի-

նակ են ծառայել բոլոր ժամանակներում:

Վեպի գլխավոր հերոսները՝ Սամվելը և Մուշեղ Մամիկոնյանը, հայրենասերի բա-

ցառիկ օրինակ են: Սամվելի համար ստեղծված է բարդ կացություն: Նրա առջև

կանգնած են երկու մեծություն՝ ծնող և հայրինիք, երկուսն էլ հարազատ ու սիրելի:

Նա պետք է ընտրություն կատարեր դրանց միջև՝ կամ ուրանալ հայրենիքը, կամ հը-

րաժարվել ծնողներից: Սամվելի << կրթությունն այնպիսի անձանց խնամքով էր կա-

տարվել, պատրաստել էին նրանից մի անձնվեր որդի՝ նախ հայրենիքի և ապա ծնո-

ղաց>>: Ռաֆֆին վկայակոչում է այս փաստը,համոզելու համար,որ Սամվելի կողմնո-

րոշումը ուներ հիմնավոր բարոյական հիմք:Ահա թե ինչու հենց սկզբից մի<< մռայլ >>

խորհուրդ առկայծում է նրա գիտակցության մեջ: Այս կասկածները նա հայտնում է իր

հորեղբոր որդուն՝ Մուշեղ Մամիկոնյանին, Սահակ Պարթևին, Մեսրոպ Մաշտոցին,

ապա և իր սիրած աղջկան՝ Աշխենին: Բոլորն էլ իր վճիռը համարում են իրավացի,

բայց դա գաղափար էր, որ պիտի ձևավորվեր հոգեբանորեն:

Կատարվել էին սարսափելի դեպքեր, և Սամվելն արդեն հոգեբանորեն լուծել էր

ներքին կասկածները: <<Կատարված իրողությունները որքան և դառն էին, նույնքան

ավելի հաստատեցին նրա մեջ այն մթին խորհուրդը, որ վաղուց հղացած էր յուր սըր-

տում>>:

Վեպի կիզակետում Սամվելը կատարում է իր բարոյակն սխրանքը: Առաջին հա-

յացքից կարելի է կարծել, թե Սամվելի արարքը հակաբարոյական է, քանի որ նա մե-

ղանչում է ծնողական սրբության դեմ: Սա հարցի պարզունակ պատկերացում է:

Ռաֆֆին գործ ունի բարոյափիլիսոփայական բարձր գաղափարի հետ, որի իմաստը

ավելի համամարդկային է, քան անձնական ըմբռնումից ելնող նախապաշարմունքը: տվյալ դեպքում խոսքը վերաբերում է ազգի և պետության ճակատագրական պահի հոգեբանությանը, որ վեր է սենտիմենտալ հուզականությունից: Այս իրողությունը խո-

րապես ըմբռնում էր նաև Վահան Մամիկոնյանը:

Սամվելի արարքը Ռաֆֆին որակում է որպես <<նշանավոր գործ>> և նշում, որ դա <<ապագայում օրինակ պիտի դառնար շատերին>>: Նշանավոր այդ գործը այն է, որ Սամվելը լուծում է քաղաքացիական էթիկայի հարցը հօգուտ հայրենիքի: Նա ելնում է այն համոզմունքից, որ հայրենիքը բացարձակ է, իսկ մյուս բոլոր զգացունք-

ները՝ մասնավոր: Մասնավորը կարելի է զոհաբերել բացարձակին, բայց մեղանչել հայրենիքի դեմ՝ դավաճանություն է, այսինքն հանցանքներից ծանրագույնը: Այս մե-

ղանչումն է, որ կատարում են Վահան Մամիկոնյանը, Մերուժան Արծրունին, Հայր Մարդպետը:

Ի հակադրություն դավաճանների, Ռաֆֆին մարդկային բարձր առաքինությամբ է

օժտել հայրենասեր հերոսներին: Էպիկական գույներով կերտված կերպարներ են Արշակ թագավորը, Վասակ Մամիկոնյանը, Փառանձեմը և շատ շատերը, որոնք ի-

րենց հայրենասերի կերպարով կարող են լավագույն օրինակ դառնալ:

Վեպի <<Երեք երիտասարդ ուժեր>> գլխում խոսվում է Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի մասին, որ նրանք հղացան տառեր գրելու գաղափարով և. <<Ով

կարող էր մտածել,- գրում է Ռաֆֆին,- որ այդ գիշերվա ջերմ վիճաբանությունից քսաներեք տարի հետո, այդ երկու նշանավոր տաղանդները կկատարեին իրենց

ուխտը և սկիզբ կդնեին հայոց մեծ լուսավորության ոսկյա դարին>>:

Ապագա սերունդների առջև դրված է մի գերխնդիր՝ պահել և պահպանել հայրե-

նիքը, գիրը և հավատը: Պատմավեպի շնորհիվ աշակերտի մոտ պետք է ծնել այդ գաղափարը, և այն պետք է արմատակալի նրանց հոգիներում: Նրանք պետք է կարողանան խնդիրները լուծել ոչ միայն ուժով , այլ խելքով և դիվանագիտությամբ, ինչի կարիքը, ցավոք, բոլոր ժամանակներում էլ զգացվել է: Բայց միշտ գտնվել է լուսավոր մի կետ, լույսի մի շող և փրկել է հայրենիքը օտար զավթիչներից: Ապագա-

յում թող այդ լուսավոր կետը դառնան մեր սաներից յուրաքանչյուրը:

Անձի արժեքային համակարգի ձևավորման և զարգացման

դերը Խ.Աբովյանի <<Վերք Հայաստանի>> վեպում

Պատմավեպի մի յուրօրինակ տեսակ է <<Վերք Հայաստանի>> վեպը, որից աշա-

կերտները կարող են սովորել արիություն, քաջություն, հայրենանվիրություն, ազգա-

պահպանություն, սերը դեպի ծնողը, յուրայինը, անհատը և հայրենիքը:

Ազգի կենսունակությունը որոշվում է երեք հատկանիշով՝ հոգևոր կարողություն,

ֆիզիկական ուժ և բարոյական միասնություն:Հայ ժողովուրդն ունի արդյոք այդ հատ-

կանիշները: Այդ հարցին Աբովյանը միանշանակ դրական է պատասխանում իր <<Վերք Հայաստանի>> վեպում, որի գաղափարը հանգում է հայ ազգի ֆիզիկական,

հոգևոր և բարոյական հարստության բացահայտմանը: Աբովյանը աշխարհին ամենից

առաջ ազդարարում է մեր ինքնաճանաչման հարցը, թե ով ենք մենք և որտեղից ենք

գալիս: Դրա պատասխանը հեղինակը տալիս է վեպի առաջաբանում:

Աբովյանը մեզ և ողջ աշխարհին իր վեպով ներկայացնում է հայ ժողովրդի ողջ

կենսագրությունը, պատմում է բերդերի ավերակների հետ կապված ավանդույթները,

հիշատակում է երևելի թագավորների ու հերոսների անուններ, ցույց է տալիս օտար

նվաճողների դեմ պայքարում հայ նախարարների մեծագործությունները: Աբովյանը

անցյալի և ներկայի միջև ստեղծում է մի կապ և ապացուցում, որ այդ ֆիզիկական

ջիղը չի անհետացել և շարունակում է գործել Աղասու և իր ընկերների, Ապարանի և

Խլղարաքիլիսայի հերոսների միջոցով: Ապարանցի պատանի Վարդանի սխրանքը

հայկական ոգու հզորությունը վկայող մի գեղեցիկ ավանդություն է: Նա սուրբ Վար-

դանի անունն էր կրում և նրա նման նահատակվում է հանուն ազգային արժանա-

պատվության և հավատի:

Ամենամեծ արժեքները մարդու կյանքում պետք է լինեն հայրենիքը, կրոնը և լեզ-

զուն: Աբովյանի վեպով աշակերտները կարող են գնահատել այս արժեքները: Հեղի-

նակը նշում է, որ երբ վերացավ հայոց թագավորությունը, <<քրիստոնեությունը դա-

ռավ Հայոց ազգի հույսն ու ապավենը>>: Այսինքն, հեղինակն ուզում է ասել, որ չկար

թագավորություն և հային մարմնավոր պահող զորեղ ուժ և հայ ազգը ապավինում

էր միայն Աստծուն և պահպանում էր քրիստոնեական հավատալիքները: Զորեղ խոս-

քեր է հնչեցրել ինչպես հավատի, այնպես էլ լեզվի մասին.<<Մի ազգի պահողը, իրար

հետ միացնողը լեզուն ա ու հավատը>> և հայ երիտասարդներին թախանձագին ուղ-

ղում է իր խոսքերը. <<Ձեզ եմ ասում, ձեզ, հայոց նորահարս երիդասարդք, ձեր անու-

մին մեռնիմ, ձեր արևին ղուրբան, տասը լեզու սովորեցեք, ձեր լեզուն, ձեր հավատը

ղայիմ բռնեցեք>>:

Աբովյանը նշում է,որ հոգևոր և ֆիզիկական այս արժեքներով էլ<<հայ ազգը արա-

րած աշխարքին հավիտյանս հավիտենից կարող է համարձակ ցույց տալ, թե ինչքան

հոգի ուներ, ինչքան կամաց զորություն, սրտի հաստատություն, որ իրան չորս կող-

մին էն հզոր ազգերը կորան, փչացան, անունները չկան, հայոց ազգը անուն էլ ունի

ու իրան հավատն ու լեզուն, մինչև էսօր իր արնի գնովը պահեց, հասցրեց, որ մեկ

ազգ էլ ա էսպես օրինակ չունի>>:

Եթե ֆիզիկական, հոգևոր և բարոյական արժեքները չդրվեն գործողության մեջ,

ապա դրանք փրկության երաշխիք լինել չեն կարող:

Աբովյանի համար իր սիրո և վշտի առարկան հայոց ազգն է և հայրենիքը: Նա վե-

պում մարդկանց ցույց է տալիս ճշմարիտ ճանապարհը, որն ազգի ու հայրենիքի

սերն է:

Հեղինակն իր վեպով աշակերտներին ուսուցանում է նաև նահատակների հիշա-

տակը պահելու առաքինություն: Ցավոք, հայ աշակերտներն այսօր իրենց քաղաքում,

շրջապատում և հարազատների մեջ ունեն հայրենիքի համար զոհված նահատակ-

ներ, և վերքերը դեռ թարմ են, և վստահ եմ, որ Աբովյանի խոսքը լսողներ և պահող-

ներ կլինեն նրանք, քանի որ իրենց սեփական մաշկի վրա զգացին պատերազմի

ծանր հետևանքները:

Կյանքի ու մահվան փիլիսոփայությունն էլ Աբովյանը վկայակոչում է ազգասիրության և հայրենասիրության իրական լինելու համար: Նշում է, թե առհասարակ այս աշխարհում ինչ խորհուրդ ունի և որն է նրա գոյության նպատակը:

<<Գանձ ու հարստություն, պատիվ ու նշան, իշխանություն և մեծություն մինչև գե-

ռեզմանի ղրաղն են մեզ ընկեր և ոչ բարեկամ… Աշխարքն էսպես ա: Քո գործքը, քո գործքը միայն քո անունը կպահեն:Հայրենասիրությունը միայն քո հիշատակը կտոնի, ազգասիրությունը՝ քո արածը կենդանի կպահի, քեզ սրբի տեղ պաշտիլ կտա>>: Այս խոսքերով Աբովյանը ուզում է ասել, որ այս աշխարհը հավերժական է, մարդը՝ անցավոր: Մարդու անունը հավերժ հետևորդների հիշողության մեջ պահողը բարի գործն է, և ավելի մեծ առաքելություն է ազգի և հայրենիքի պիտանի լինելը և բարեգործություն անելը:

Աբովյանը հայրենասիրության գաղափարը դարձրել է սեր և զգացմունք և ցուցադրել է ժողովրդի հոգեբանության մեջ և ներկայացրել որպես կենսական արժեք:

Եզրակացություն

Հետազոտական աշխատանքում շոշափված է այնպիսի թեմա, որը շատ մեծ

նշանակություն ունի հայ ժողովրդի և Հայաստանի համար: Այն է՝ պատմավեպերի դերը անձի արժեքային համակարգի ձևավորման և զարգացման գործընթացում: Արժեհամակարգի ձևավորման համար դպրոցում անփոխարինելի դեր ունեն ուսումնական բոլորն առարկաները, հատկապես՝ գրականությունը, որը աշակերտներին ծանոթացնում է հազարամյակների փորձ ունեցող հայկական քաղաքակրթությանը, նրա առաջացման ու զարգացման օրինաչափություններին, ձեռք բերումներին,ստեղծած արժեքներին և նվաճումներին, նաև՝ այդ ճանապարհին հայ ժողովրդի դժվարություններին ու կորուստներին:

Պատմավեպերն ուսումնասիրելիս աշակերտի մոտ ձևավորվում է ազգային դիմագիծ, պետականակերպ մտածելակերպով, հայ ժողովրդի դերը պատմության մեջ պատկերացնող, հայոց ազգային և համամարդկային արժեհամակարգ կրող պատասխանատու անձ և քաղաքացի: Ելնելով վերոնշյալից՝ կարող ենք եզրահանգել, որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի խնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

Որպես հայ, յուրաքանչյուր աշակերտ պետք է իմանա, թե որն է իր անելիքն այստեղ՝ հայրենիքում: Դպրոցում ստացած արժեհամակարգը աշակերտին կհուշի սեփական առաքելության մասին, որտեղ ամենակարևորը՝ հայրենիքը, իրական սիրով սիրելն է: Պետք է պահպանի անփոխարինելի արժեքները՝ հայրենիքը, հավատը, կրոնը և մշակույթը:

Կրթության գլխավոր իմաստը և հենքը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը: Արժեքների ձևավորման ազգային և համամարդկային ընդհանուր չափորոշիչները, երբ վերանում են և վարքի կարգավորիչ են դառնում պահի նպատակա-

հարմարություններն ու իրավիճակը, կարևորագույն խնդիր է դառնում արժեհամա-կարգի գոյությունը կամ բացակայությունը, քանի որ արժեհամակարգը պետք է ձևավորվի ազգային հոգևոր-բարոյական ընդհանրականության հենքի վրա:

Օգտագործված գրականության ցանկ

1. Դերենիկ Դեմիրճյան <<Վարդանանք>> Երևան 1987 <<Լույս>>

2. Ռաֆֆի Երկերի ժողովածու հատոր ութ <<Սամվել>> 1986 <<Սովետական գրող>>

3. Խաչատուր Աբովյան <<Վերք Հայաստանի>> Երևան 1955<<Հայպետհրատ>>